Կարգապահական գործ թիվ 20011

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2021թ-ի հունվարի 19-ի թիվ 51 նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/21-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԻՐԻՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Կարեն Մեժլումյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրչյանի, Տիգրան Խուրշուդյանի, Կարեն Սարդարյանի.

քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի,

քննության առնելով փաստաբան Իրինա Մանուկյանին (արտոնագիր՝ 392) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Տ՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Անահիտ Խաչատրյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է, որ 2016 թվականին դիմել է փաստաբան Իրինա Գրիգորի Մանուկյանին **(այսուհետ՝ նաև Փաստաբան),** նրա հետ կնքել է պայմանագիր, որպեսզի փաստաբանն իրեն ծառայություն մատուցի իր կողմից ժառանգություն ստացած հայրական սեփական տան տնամերձ հողամասի հատակագծում առկա անճշտությունները պարզելու և դրանք ուղղելու, ինչպես նաև մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու և վիճահարույց հողամասի նկատմամբ սեփականության իր իրավունքը գրանցելու նպատակով:

Պայմանագրում նշված ծառայությունների համար գին է սահմանվել 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ: Ըստ Դիմողի բանկի աշխատակիցը հրաժարվել է նշված գումարը մուտք անել փաստաբանի կողմից տրված հաշվեհամարին, ասելով, որ պետք է խոսի վերջինիս հետ, սակայն կապ հաստատել չի կարողացել: Այնուհետև փաստաբանն

այդ գումարն անձամբ է վերցրել Դիմողից, պայմանով, որ ինքը այդ գումարը մուտք կանի իր հաշվեհամարին և կտրոնը կփոխանցի Դիմողին, սակայն վերջինս այդպես էլ չի ստացել կտրոնը:

Դիմողը նշել է, որ գումարը ստանալուց հետո փաստաբանը պատշաճ կերպով չի կատարել պայմանագրով սահմանված պարտավորությունները, ավելին՝ սկսել է իր զանգերին չպատասխանել և բաց թողնված զանգերին ի պատասխան, նույնաբովանդակ հաղորդագրություններ ուղարկել, նշելով, որ զբաղված է, այլ գործով նիստի է, հիվանդ է, երեխան է հիվանդ և այլն:

Փաստաբանը հաղորդագրություններով հավաստիացրել է Դիմողին, որ շուտով կհանդիպեն, սակայն հանդիպումները եղել են պատահական, որոնց ժամանակ էլ վերջինս ասել է, որ դատական նիստ է նշանակված Դիմողի գործով ու նորից անհետացել: Դիմողը գտնում է, որ փաստաբանի կողմից նշված դատական նիստերը հորինված են եղել, ինչը նրան 2019թ. հոկտեմբեր ամսին խոստովանել է հենց փաստաբանը, ընդունելով, որ դեռևս ոչ մի աշխատանք չի կատարվել իր կողմից, սակայն խնդրել է իրեն վերջին հնարավորություն տալ և խոստացել, որ գործը ավարտին կհասցնի մինչև 2019 թվականի դեկտեմբերի 1-ը:

Դիմողը համաձայնվել է, սակայն վերջինիս պնդմամբ փաստաբանը շարունակել է իրեն խաբել և այդպես էլ իր գործին ընթացք չի տվել, փոխարենը պահանջել է նոր պայմանագիր կնքել և նոր լիազորագիր տալ իրեն:

Դիմողը նաև հայտնել է, որ 01.02.2020 թվականին պատրաստվել է դիմել Պալատ, սակայն փաստաբանը կապ է հաստատել իր հետ և խնդրել իր դիմումին ընթացք չտալ և կրկին իրեն ժամանակ տրամադրել գործով զբաղվելու համար, ինչին Դիմողը համաձայնվել է, սակայն դրանից հետո ևս մի քանի անգամ փաստաբանն ասել է, որ արդեն զբաղվում է գործով և հայցադիմում է ներկայացրել դատարան, այնուհետև խոստովանել է, որ դեռ չի ներկայացրել գործը:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ Դիմողը խնդրել է փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանության:

Դիմումին կից, ի թիվս այլ փաստաթղթերի, ներկայացվել են նաև վերը վկայակոչված պայմանագրերի և փաստաբանին ուղարկած հեռախոսային նամակագրության պատճենները:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 12.06.2020թ. թիվ 100-Ա/ԿԳ-20011 որոշման հիման վրա Փաստաբան Իրինա Մանուկյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.6.1, 2.7.2 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

16.06.2020թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հայկ Պետրոսյանին (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Փաստաբանների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

<u>3.2. Փաստաբանի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբանը 25.11.2020 թվականին բացատրություն է ներկայացրել, որով հայտնել է, որ իր և Դիմողի միջև կնքված փաստաբանական ծառայություններ մատուցելու մասին պայմանագրի շրջանակներում շարունակում է կատարել իր պայմանագրային պարտավորությունները:

Փաստաբանը տեղեկացրել է նաև, որ «ՍՈՅԼ» ՍՊԸ-ի կողմից ստացել է նախապատրաստված հատակագծերը, որոնք իր կողմից ներկայացվելու են ՀՀ ԱՆ կադաստրի պետական կոմիտե՝ հողամասի համադրության հանգամանքը պարզելու նպատակով:

Դիմումին կից ներկայացվել են «ՍՈՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրված գրությունը և հատակագծերը:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 10.08.2020թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ կողմերն առարկություն չեն ներկայացրել:

10.08.2020թ-ին կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-L որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ նաև Կանոնագիրք) հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև

կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում գործի համար նշանակություն ունեցող հետևյալ փաստերը.

1. 17.09.2016 թվականին Դիմողը փաստաբանական ծառայություն մատուցելու պայմանագիր է կնքել Իրինա Մանուկյանի հետ, որով փաստաբանը պարտավորվել է ներկայացնել իր շահերը դատարանում և պետական մարմիններում՝ կապված իր կողմից ժառանգություն ստացած սեփական տան տնամերձ հողամասի նկատմամբ տրված հողամասի սեփականության իրավունքի գրանցման վկայականում (հողամասի հատակագծում) առկա անճշտությունները վերացնելու, մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու և վիճելի հողամասի նկատմամբ իր սեփականության իրավունքը գրանցելու նպատակով: *Սույն փաստը հաստատվում է 17.09.2016թ. պայմանագրով* ***(այսուհետ՝ Պայմանագիր):***

2. Պայմանագրի կնքումից հետո փաստաբանը չի կատարել պայմանագրով սահմանված իր պարտականությունները և խուսափել է Դիմողի հետ հանդիպելուց կամ չի պատասխանել Դիմողի զանգերին: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի նամակագրությամբ:*

3. 10.01.2018 թվականին Դիմողը և Փաստաբանը նույնաբովանդակ մի նոր պայմանագիր են կնքել, որի համաձայն փաստաբանը պարտավորվել է ներկայացնել Դիմողի շահերը դատարանում և պետական մարմիններում՝ կապված բնակելի տան տնամերձ հողամասի հատակագծում առկա անճշտությունները պարզելու և դրանք ուղղելու, մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու և հողամասի նկատմամբ Դիմողի սեփականության իրավունքը գրանցելու հարցով: *Սույն փաստը հաստատվում է 10.01.2018թ. պայմանագրով:*

4. 10.01.2018 պայմանագրի կնքումից հետո էլ փաստաբանը շարունակել է ընթացք չտալ Դիմողի գործին, խուսափել վերջինիս հետ կապ հաստատելուց:

5. Փաստաբանը Դիմողի գործով 25.09.2020 թվականին դիմում է ներկայացրել «ՍՈՅԼ» ՍՊ ընկերությանը և ստացել վերջինիս պատասխան գրությունը և հատակագծերը: *Սույն փաստը հաստատվում է 20.11.2020 թվականի գրությամբ:*

6. <u>Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Իրինա Մանուկյանի (արտոնագիր 392, ստացված՝ 12.06.2000թ.) նկատմամբ 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում հինգ անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, (չհաշված սույն կարգապահական գործը), որոնցով փաստաբանի նկատմամբ կիրառված «նկատողություն, խիստ նկատողություն և տուգանք» կարգապահական տույժերը մարվել են:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդը, լսելով Դիմողի և փաստաբանի բացատրությունները և ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Իրինա Մանուկյանը թույլ է տվել Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտումներ, իսկ

Կանոնագրքի 2.6.1 ենթակետի խախտման հատկանիշներով փաստաբան Իրինա Մանուկյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

******

➢ **Օրենքի 19-րդ հոդվածի և Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման մասով**

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով.*

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Օրենքի և Կանոնագրքի վերը նշված կարգավորումներից բխում է, որ փաստաբանը ոչ միայն պետք է կատարի իր ստանձնած պարտականությունները, այլ նաև դրանք պետք է կատարվեն ժամանակին:

Օրենքի 19-րդ հոդվածն օգտագործում է «բարեխղճորեն պաշտպանել» եզրույթը, իսկ Կանոնագրքի 2.7.2 ենթակետն օգտագործում է «բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ» եզրույթը: Ակնհայտ է, որ «բարեխիղճ» եզրույթն ի թիվս այլոց, ենթադրում է համապատասխան գործողությունների կատարումը ժամանակին:

Կանոնագրքի 3.5.5 ենթակետը նաև ուղղակիորեն սահմանում է, որ փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր

մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին:

Ըստ գործում առկա նյութերի՝ փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերը ներկայացնելու պարտականությունը դեռևս 17.09.2016թ-ին: Փաստաբանը Դիմողի շահերի պաշտպանությանն ուղղված գործողություններ կատարել է միայն 14.05.2020թ-ից հետո, երբ Դիմողը բողոք է մուտք արել ՀՀ փաստաբանների պալատ:

Ավելին, ըստ կողմերի միջև կայացած նամակագրության՝ Դիմողի զանգերին ի պատասխան փաստաբան Իրինա Մանուկյանը հաղորդագրություններ է ուղարկել վերջինիս, որոնցով տարբեր պատճառաբանություններ է բերել հիմնավորելու համար իր զբաղվածությունը և հանդիպելու կամ զանգերին պատասխանելու անհնարինությունը:

Վերլուծելով նշված կանոնները՝ Պալատի խորհուրդը գտնում է, որ սույն գործի փաստերի լույսի ներքո անհրաժեշտ է դրանք դիտարկել համակցության մեջ: Նշված կանոններից բխում է, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ իրականացման համար:

Խորհուրդն արձանագրում է, որ փաստաբանի բարեխղճությունից ուղղակի բխում է ժամանակին վստահորդի հանձնարարությունը կատարելու պարտականությունը: Վստահորդի հանձնարարությունը ժամանակին կատարելու գնահատման չափանիշ՝ օրենսդրությամբ որևէ գործողության համար հստակ ժամկետ սահմանված չլինելու դեպքում, առնվազն պետք է դիտարկվի այս կամ այն հանձնարարության կատարման ողջամիտ ժամկետը:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Փաստաբանի վերը նշված վարքագիծն ակնհայտորեն դուրս է Օրենքի 19-րդ հոդվածի և Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերով սահմանված վարքագծի շրջանակից:

Անդրադառնալով վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն չցուցաբերելու վարքագծի դրսևորման մեղքի ձևին՝ Խորհուրդն արձանագրում է, որ այն դրսևորվել է դիտավորությամբ, քանի որ՝

- փաստաբանը չի ներկայացրել որևէ հիմնավոր պատճառ, որով կբացատրվի ժամանակին իր ստանձնած պարտականությունները չկատարելու հանգամանքը,
- փաստաբանը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ (փաստաբանի վարքագծի կանոնին հակասող) բնույթը:

****

- **Կանոնագրքի 2.6.1 ենթակետի խախտման մասով**

Կանոնագրքի 2.6.1 ենթակետի համաձայն՝ *պահպանելով Օրենքի, կանոնադրության և Կանոնագրքի նկատմամբ պահանջները՝ փաստաբանը պարտավոր է միշտ պաշտպանել իր վստահորդի շահերը և գերադասել դրանք իր անձնական և փաստաբան գործընկերների շահերից:*

Խորհուրդն արձանագրում է, որ գործում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ փաստաբանը հանձնարարության պատշաճ կատարումը չի կարողացել ապահովել, քանի որ իր կամ փաստաբան գործընկերների շահերը գերադասել է ավելի բարձր:

Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ *կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:*

Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ *եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:*

Նկատի ունենալով, որ նշված փաստերը չեն հաստատվել, Խորհուրդն այս մասով փաստաբանի վարքագիծը չի համարում Կանոնագրքի 2.6.1 ենթակետին հակասող, ուստի սույն ենթակետի խախտման հիմքով Փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

******

Կարգապահական տույժի ընտրությունը

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների

4) տուգանք

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբան Իրինա Մանուկյանի անձը բնութագրող

հանգամանքները:

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Իրինա Մանուկյանին (արտոնագիր թիվ 392) ճանաչել մեղավոր Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Իրինա Մանուկյանի նկատմամբ կիրառել (նշանակել) կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Փաստաբան Իրինա Մանուկյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը Կանոնագրքի 2.6.1 ենթակետի մասով կարճել:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյան

19 հունվար 2021թ.
թիվ ԿԳ/21-Ա
ք. Երևան